ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

27 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2024թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու բոլոր անդամներ:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Ալեքսեյ Չիչյովը

Նիստը արձանագրում էր՝ ը

Լսեցին

ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 Թ._Ի ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27_Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԱՐԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթներով Ֆիոլետովո համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Ֆիոլետովո համայնքի ավագանու 2024 թ.-ի սեպտեմբերի 27-ի հերթական նիստի օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ

1. Ֆիոլետովո համայնքի 2024 թվականի սեպտեմբերի 27-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին

2. Ֆիոլետովո համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն, վարձակալության եվ կառուցապատման իրավունքներով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի եվ մրցույթի պայմանները հաստատելու մասին

3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերը (գոտևորման մասով) հաստատելու մասին

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 26-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ (ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՄԱՍՈՎ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՍԱՐԴԱՐՅԱՆ /

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության «Քաղաքաշինության մասին» օրենքի 143 հոդվածի 5-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշումով հաստատված կարգի 54-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի 1064-Ա որոշմամբ ստեղծված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թվականի օգոստոսի 12-ի N2-17 դրական եզրակացությունը, Ֆիոլետովո համայնքի ավագանին՝ որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնքը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Լոռի-1 համակցված տարածական պլանավորման նախագիծը և նախագծով առաջարկվող հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 28-Ա/

Լսեցին

ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ, ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ, ԱՃՈՒՐԴԻ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՍԱՐԴԱՐՅԱՆ /

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 56-րդ հոդվածի 5-րդ կետով, 67-րդ, 68-րդ հոդվածներով, «Տեղական Ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 12.04.2001թ-ի թիվ 286 որոշմամբ

հաստատված կարգով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը, Ֆիոլետովոհամայնքի ավագանին՝ որոշում է.

1. Տալ համաձայնություն Ֆիոլետովո համայնքի վարչական սահմանում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն, վարձակալության իրավունքով տրամադրելուն:

2. Աճուրդ վաճառքով օտարվում է հողամաս

Լոտ 1. Ֆիոլետովո համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող 06-113-0101-0107 ծածկագրով 0,086597 հա 2-րդ կարգի խոտհարք: Մեկնարկային գինը սահմանել 120000 /հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ:

Լոտ 2 Ֆիոլետովո համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող 06-113-0154-0007 ծածկագրով 4,36339 հա 4-րդ կարգի խոտհարք: Մեկնարկային գինը սահմանել 2,270000 /երկու միլիոն երկու հարյուր յոթանասուն հազար/ ՀՀ դրամ:

Լոտ 3 Ֆիոլետովո համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող 06-113-0154-0003 ծածկագրով 2,42437 հա 4-րդ կարգի խոտհարք: Մեկնարկային գինը սահմանել 1,262000 /մեկ միլիոն երկու հարյուր վաթսուներկու հազար/ ՀՀ դրամ:

Լոտ 4 Ֆիոլետովո համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող 06-113-0160-0198 ծածկագրով 0,39039 հա 4-րդ կարգի խոտհարք: Մեկնարկային գինը սահմանել 204000 /երկու հարյուր չորս հազար/ ՀՀ դրամ:

Լոտ 5 Ֆիոլետովո համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող 06-113-0011-0014 ծածկագրով 0,016 հա բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 130000 / հարյուր երեսուն հազար/ ՀՀ դրամ:

Լոտ 6 Ֆիոլետովո համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող 06-113-0117-0013 ծածկագրով 0,1652 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 4-րդ կարգի վարելահող: Մեկնարկային գինը սահմանել 112000 / հարյուր տասներկու հազար/ ՀՀ դրամ:

Լոտ 7 Ֆիոլետովո համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող 06-113-0007-0051 ծածկագրով 0,02561 հա բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողամաս:

Մեկնարկային գինը սահմանել 204000 / երկու հարյուր չորս հազար/ ՀՀ դրամ:

Աճուրդի լոտի մասնակցության վճարը սահմանել 5000 ՀՀ դրամ, նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 50 տոկոսի չափով, նվազագույն քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

3. Վարձակալության իրավունքով, գյուղ. գործունեություն ծավալելու նպատակով, տրամադրվում է գյուղատնտեսական նշանակության հողամաս՝ 1 լոտով

- Լոտ 1: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-113-0130-0127 ծածկագրով 0,068373 հա գյուղատնտեսական նշանակության 4-րդ կարգի վարելահող՝

գյուղատնտեսական գործունեության նպատակով՝ 25 տարի ժամկետով, վարձակալության մրցույթ, մեկնարկային 1000 դրամ տարեկան վարձավճարով:

Լոտի մասնակցության վճարը սահմանել 5000 ՀՀ դրամ, նախավճարի և նվազագույն քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

3. Ուժը կորցրած ճանաչել Ֆիոլետովո համայնքի ավագանու 16.08.2024թ-ի թիվ 20-Ա որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 27-Ա/

Ավագանու անդամներ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԲԼՈՒԽԻՆՈՎ

ԱԼԵՔՍԵՅ ՆՈՎԻԿՈՎ

ՄԻԽԱԻԼ ՉԻՉՅՈՎ

ԱԼԵՔՍԵՅ ՌՈՒԴՈՄՅՈՏԿԻՆ

ՄԻԽԱԻԼ ՌՈՒԴՈՄՅՈՏԿԻՆ

Համայնքի ղեկավար

ԱԼԵՔՍԵՅ ՉԻՉՅՈՎ_____

Նիստն արձանագրեց՝ ը _____